



ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻ ՔՈՒՄ

Ա. ՄԵՍՐՈՊՅԱՆ

Ա. ՄԵՍՐՈՊ ՄԱՅՏՈՑԻ ՏՈՆԸ ՕՇԱԿԱՆԻ ՄԵԶ



Չական հնադարյան գլուղը
կգտնվի Արագածի բարձրա-
վանդակին վրա: Քասաղ գետը
կոռուփեանոր ճոխ այգիները
և դաշտագեղ դաշտային մրգաստանները,
որոնք կտարածվին Արարատյան անժայրա-
ծիր դաշտավայրին վրա:

Օշակա՞ն...

Ո՞ւ չէ լսեր այդ նվիրական անունը իր
մանկության օրերուն, ո՞ւ մեկ հայու սիրու
թունդ չեղեր ամեն անգամ՝ որ կարտասանի
այդ բառը:

Օշականի մատուան մեջ է թաղված հայ
զիրի մեծ գյուղարար Ս. Մեսրոպ Մաշտո-
ցը, որը եղավ անդրանիկ դաստիարակը
հայ ժողովուրդի, որու ծունկերուն առջև ա-
ռաջին անգամ՝ հինգերորդ դարուն հայ եր-
շանիկ պատամիները հետեցին մեր մեծա-
սպանչ լեզմի առաջին տառերը:

Վաղուց որոշեր էինք խումբ մը հայրենա-
դարձ ընկերներու հետ այցելել Օշականի
եկեղեցին, Ս. Մեսրոպի դամբարանով կրկ-
նակի նվիրականացած այդ սրբավայրը,
Մեծ Սուրբի տոնին օրը՝ ծննդրելու անոր
անմահ գերեզմանին առջև, Սփյուռքի հայու-
թյան և հայ մտավորականության կարուտի
զգացուամներուն և հարգանացը թարգմանը
ըղալու մեծ լուաավորչ շիրմի առաջ:

Սիրու տրոփման մեջ էր. հուզված էին
նաև իմ մյուս ընկերները: Օշականի Մեծ
Սուրբը մեկ համար ապրող հավետ կենդանի
ներշնչումի անսպառ աղբյուր մըն էր: Մե-

րունդներ եկեր և ծնրադրեր էին անոր շիրմի
առաջ:

Մեծ աարոնցին, 1,500 տարիներե ի վեր
մեծ մազնիսի մը նման իրեն է քաշեր ողջ
հայության սիրութը. հազարներ ծնրադրեր էին
հայության առաջին և հանճարեղ դաստիա-
րակի գերեզմանի առաջ: Ահա մենք ալ կեր-
թայինք, այդ հազարներու ճամրով, ծնրա-
դրելու անոր սուրբ և անմահ աճյուններու
առջև:

Օշակա՞ն... Քանինե՞ր քեզ ուստի եկան և
բանինե՞ր դեռ պիտի գան մոտիկ ու հեռա-
վոր հորիզոններեն ուր հայ մը կա, ուր Ս.
Մեսրոպի շունչեն շունչ մը կա վրանին,
և պուտ մը սեր հայ զիրի և հայ գրականու-
թյան մասին:

Ս. Մեսրոպի գերեզմանը 1,500 տարիներե
ի վեր եղած է հայ ժողովուրդի երկրագելի
պաշտամունքի մեկ սրբավայրը: Սկսած հա-
յոց հնագույն պատմիչներեն՝ Կորյուն, Փա-
վոսոս Բյուզանդացի, Մովսես Խորենացի,
մինչև մեր օրերու պատմագիրներ՝ Լեռ,
ակադ, Արելյան, ակադ. Մանանդյան և
ուրիշներ, իրենց պատմագիտական ուսում-
նասիրություններով վեր են համեր, արժեքա-
վորեր Ս. Մեսրոպի պատմական զերը հայ
ժողովուրդի համար, մեծարեր են անոր ան-
մոռաց հիշատակը: Այդ աշխատությունները
բոլորն ալ ներշնչումներ են Ս. Մեսրոպ
Մաշտոցի հանճարեղ և անմահ գործին:

Ս. Մեսրոպի անմահ գործը և անոր հավեր-
ժական հիշատակը նվիրական գերեզմանը՝
հայրենի Օշական գյուղի մեջ, անսպառ աղ-
բյուր եղան մեր հոգևոր և աշխարհիկ բա-

նաստեղծության համար: Եթե մեծ հայրենապես Սիքայել նալբանդյանը Ս. Մեսրոպի գերեզմանի առջև հղացավ իր «Օշական» բանաստեղծության հուղարկի տողերը և նվիրեց անոր անմահ հիշատակին, ապա օտար երկինքներու տակ ծնած մեր բանաստեղծները, որոնք հեռու էին հայրենի հողի, ջորի, քարերու նվիրականություններին և նեղշնչումնեն, իրենց կարոտի զգացումներով երգեցին Ս. Մեսրոպի փառքը, անոր անմահ գործը:

Այսօրվան հավատացյալ օշականցին իր նախնիքներին իրեն ժառանգ մնացած սովորությունները սրբությամբ կպահե: Տարին անգամ մը Օշականի տոնախմբության և Ս. Գեորգ եկեղեցի տոնին, հանդիսավոր պատրագեն վերջ, եկեղեցական մեծ թափոր կազմելով՝ նախագահությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին կամ Մայր Աթոռի ավագագույն եպիսկոպոսներեն մեկոն, հոգեհանգիստ կատարվի Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզմանին վրա և կիֆարաբանվի անոր անմահ հիշատակը: Այդ տոնին Հայաստանի զանազան շրջաններեն բազմաթիվ հավատացյալներ ուկսի վկանակ: Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը համբուրելու Այդ օրը մինչև ուզ գիշեր հայ հավատացյալ ժողովորդը, եկեղեցի շրջափակի և անոր մերձակա պարտեզներու մեջ իր ավանդական սովորություններուն համաձայն, մատադիմերու գենումով, կերպումառով, երգ ու պարով, դհու ու զուտնայի և խրախճանքի երգերով կնշե այդ տոնակատարությունը:

Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզմանին ուփառագնացության երթալու տարիներու մեր երազը իրականացավ 1951-ի հունիսի 14-ին: Այդ օրը Օշականի Ս. Գեորգ եկեղեցի տոնակատարության օրն էր: Առոտուն կանուխ, խոմը մը ընկերներով, ծրաւանի ավտոկայանեն ճամբար: Օրը ամառնային և համելի էր, քաղցր բուրմունքով հագեցած: Մեր մեքենան կոսովար ասֆալտապատ երկարածիկ խճուղիներեն, որոնց եղերքներեն դեպի երկինք սլացող բարդիները կանաչ տողանցքի պես կընդգծեին մեր ճամբան: Ճմայիչ է հայրենի բնության ամառնային առավոտը: Մեր աշխերուն կպարզեին ընդարձակ պտղալից մրգաստաններ, կոլտնտեսային անծայրածիր խաղողի այգիներ, խոխոչացող առվակներ, ցորենի և բամբակի հասուն արտեր, գյուղեր և հայրենադարձներու նորակերտ ավաններ՝ իրենց երկարականի տուներով, պարտեղ-այգիներով, հեռավոր հորիզոնի վրա կապտագեղ լեռներու շարաններ, որոնք երկու մասերու բաժնեւ-

լով կմիանային հարավեն հայոց աշխարհի վեհապանծ Մասհսին, իսկ հյուսիսեն՝ հզոր Արագածին:

Առավոտյան ժամը 8-ին հասանք Օշական: Գյուղը եռուզեռի մեջ էր, ավտորուտներով, տակսիներով, մասնավոր ավտոներով, բեռնատար ավտոներով և գյուղական սալլերով ովհատավորներ կուպային: Անոնցմեծ շատերը հայկական սովորության համաձայն մատադի պատրաստություններով կուգային հեռավորը շրջաններեն մինչև Օշական: Օշականի եկեղեցական տոնախմբությունը և Ս. Մեսրոպ Մաշտոցի ուստի օրը Օշական էին քաշմբարձմանիվ հավատացյալ ժողովորդ հայրենի երկրի զանազան շրջաններեն:

Պատմական Օշականի շեն ու հյուրասեր գյուղացիները տոնական ցնծության մեջ էին: Օշականցին, ալեղարդ ծերունիեն մինչև մանուկը, տոնական մաքուր ու կոկիկ հագված, ժպտերես կղիմավորեր իր հյուրերը: Եկեղեցի տանող փողոցի ծայրեն կլսեինք եկեղեցիին զանգակները, որոնց զողանջին տակ ուստավորներս հավատքով և երկրուղածությամբ կշատապեինք դեպի եկեղեցի: Հնադարյան մատուռը իր շրջափակով: Հանդիսակար սակարագություն ուներ: Եկեղեցիին քարակերտ տեսքը, իր աշտարակածն բարձրադիր զանգակատունով, մեզի կպատկերը հայ ժողովորդի ճարտարապետական արկեստի գեղեցիկ մեկ նմուշը:


Տարիներու մեր երազը իրականացած է, մեր ուկսը կատարված է. Օշականի պատմական մատուռին մեջ ենք: Ս. Խորանի աջակողմյան բաց դռնեն քանի մը սանդուվավար, քարե կամարներու տակ, մենք մեզ գտանք Ս. Մեսրոպ Մաշտոցի պարզուկ մարմարյա գերեզմանաքարին առջև: Երկյուղածությամբ ծնրադրեցինք Ս. Մեսրոպի նշխարները ամփոփող գերեզմանի առջև և ջերմեռանդությամբ համբուրեցինք տապանաքարը: Քարե կամարներու կիսախավար այդ անկյունը Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզմանով և խորհրդավորությամբ համակեց մեզ: Խորհրդապահ լուսիւնը կարծես աստվածային հրաշքով մը կպատկերեր մեզ ալ Ս. Մաշտոցի անմահ փորձը: Ահա աշքերուդ առջև դարերու մշուշի մեջեն կերպի ան՝ փետուր գրիչը և տախտակը ձեռքին, որ աստվածային մեկ ներշնչման բոպեին մարմին կուտա հայ այբուբենին՝ բանալով հայ դրաբության դուրը մեր ժողովորդի առջև...:

Խոր հուզյերու տարապին տակ մկսան կյանք առնե, Ս. Մեսրոպի կյանքեն ուրիշ դրվագներ: Իմ առջև կպատկերանար նաև Ս. Մեսրոպ Մաշտոցի թաղման օրը: Ինձի կթվեր, թե տասնյակ հազարաւոր հայ դրաբության դուրը մեր ժողովորդի առջև...

զովուրդին հետ, ևս ալ սպակիր հուզարկավոր մըն էի իր աշակերտներուն պես, անդրանիկ ուսուցչի դագաղին հետեղ:

439 թվի փետրվարի 17-ին սառնաշունչ

Հայոց սպակիր ժողովուրդը գունդ առ զունդ հավաքված էր կաթողիկե տաճարը, բակը և տաճարի շրջակայթը: Վաղ ցերեկին Վաղարշապատի կաթողիկե տաճարն Ս. Մեսրոպ



Օշականի եկեղեցին

ձմռան առավոտը, քաղաքամալր Վաղարշապատը սաստիկ հուզման մեջ էր. տիուրդ դեպք մը պատճած էր: Հայաստանի ամեն քաղաքներն, շրջաններն և ավաններն

Մաշտոցի դագաղը ճամբար ելավ դեպի Օշական: Մեծագործ սուբրի դագաղը ձեռամբարձ կտանեին իր աշակերտները: Թաղման կովսավորեին Ս. Մեսրոպի աշակերտ՝ Հա-

լոյց աշխարհի հազարապետ իշխան Վահան Ամատոռնին և Մամիկոնյան տան ներկայացուցիչ Հմայակ Մամիկոնյանը՝ եղբայր Վարդան Մամիկոնյանի: Սովորի դագաղը կառաջնորդվեր բարձրաստիճան եկեղեցականներու թափորով, որոնք զգեստավորված, խաչերով ու ավետարաններով, բուրվառներով կապալմուսերգին: Հայոց աշխարհը, հայ ժողովուրդը, գլուխ կիտնարդեցներ առաջին հայ ուսուցչի դագաղի առաջ: Անոր դադարը շրջապատեր էին իր անդրանիկ աշակերտները, որոնք ամենեն ավելի վշտահար էին:

Ս. Մեսրոպի դագաղին հետեւին նաև Մամիկոնյան տան մեծ իշխանութիւնները և նախարարներու տիկինները: Վաղարշապատ քաղաքնեն մինչև Օշական ճանապարհը երկար էր: Ժամերով տասնյակ հազարավոր հողարկավորները վշտի ծանրության տակ, կհետևեին դագաղին, լուս և թափիծու: Արարատյան դաշտային տարածություններուն հաջորդեցին քարքարու մեծ ու փոքր բլուրներ: Զեռքերու վրա, մասունքի մը պես գուրդուրալով, Ս. Մեսրոպ Մաշտոցի դագաղը իշեցուցին Քասաղ գետի մեծ ձորը և վերջին անգամ մըն ալ բարձր բլուր մը բարձրանալով, հասան Օշական զլուրը, Վահան Ամատոռնիի կալված-ամրոցը: Այնտեղ թաղման կարգ կատարվեցավ: Տասնյակ հազարավոր ժողովուրդ վերջին անգամ երկրպագեց հայոց առաջին ուսուցիչ՝ հայ տառերու գլուտարար Ս. Մեսրոպ Մաշտոցի դագաղի առջև, և թաղման տխուր մեղեղիներու և սաղմուերգության տակ փակվեցավ սուրբի գերեզմանը: Այդ օրին՝ սրբավայր մը դարձավ Օշականը:

Որքան տպավորիչ, նույնքան հովիչ էր կյանքիս արդ բախտավոր բռպեն, Ուստի էի եկեր Հնադարյան Օշականի մատուռը, մեծ գյուտարարի դամբարանը: Խոնմկի բուլը տարածվեր էր ամեն կողմ: Հուզումը վարակեց ժողովուրդը, երբ դարավոր զանքակատան թախծուտ զողանքներուն տակ սկըսավ հանդիսավոր պատարագը: Պատարագի երգեցողություններուն կիսառնվերն հավատացյաներու աղոթքի մրմունքները:

Մատուռի բարձրադիր խորանը ողողված էր ջաներու և աշխանակներու լուսով: Պատարագի հայր սուրբին և անոր շուրջը սպասարկող քահանաներու և սարկավագներու, ծաղկավոր, մետաքսաթել և ոսկեծոպ զգեստավորամբները և խորանը զարդարող եկեղեցական թանկարժեք իրերը կավելցնեին

ովատի օրվան հանդիսություններու տպավորությունը:

Պատարագի հոգեշնորհ Վազգեն վարդապետի հոգեշնորհ քարոզեն հետո, որ նվիրված էր Հայաստանյայց եկեղեցվոր և Օշականի հանդիսավոր նշանակության և Ս. Մեսրոպ Մաշտոցի նվիրական հրշատակին, քաղցրալուր շարականներու մեղեղին տակ, հարյուրավոր հավատացյաներ ամեն տարի քի և սեպի, երկուղածությամբ կմուտենային խորանին՝ հաղորդության արժանանալու համար: Ս. պատարագը վերջանալուն, եկեղեցական մեծ թափորով, մոմերով, խաչ ու խաչվառվ, ամբողջ ժողովուրդով, գացինք Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը: Այնտեղ հոգեհանգստի կարգ կատարվեցավ: Ուստավորություններու բազմությունը ծնրադիր հայրութելով Ս. Մեսրոպի շիրմաքարը, մոմեր վառեց անոր շուրջը: Շատեր երախտալիր բառերով կիտառաբաններն անոր անմահ գործը և ծաղկներով կզարդարեին անոր հավիտենական հանգստարանը: Հարյուրավոր ովատավորներ կերպներ և մատաղներ նվիրեցին Ս. Մեսրոպ Մաշտոցի անունով: Արարողությունները վերջանալուն պես, ուստավորությունները ցրվելին հետո, մեր փոսմիթ 7 դնկերներս, անձնատուր մեսրոպյան մեր խոհերուն, դեռ երկար ժամանակ լուս կդիտեինք անմահ սուրբին նվիրված գերեզմանը, ուր կդիտներին անոր նշխաները:

Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզմանին վրա, ըստ Կորյունի՝ իր իսկ աշակերտի վկայության, եկեղեցի կառուցեց իր աշակերտներն հայոց հազարավետ Վահան Ամատոռնին: Այդ եկեղեցին վերանորոգվեցավ 1639 թվին: Իսկ 1879 թվին Գեորգ Դ. Մեծագործ կաթողիկոսը այդ հին եկեղեցին հիմքին քանդելով, անոր տեղ շինեց բոլորովին նորը, այսօրվան Ս. Գեորգ եկեղեցին, 439 թվականներ Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը մնացած է անձեռնմխելի: Ըստ այսօրվան օշականցիին պատմածին, ովհանն Ամատոռնին իր պաշտած ուսուցիչ Ս. Մաշտոցին գերեզմանին վրա եկեղեցի շենելեն հետո, իր քայլերով 140 ոտք հեռավորությունը չափելով, ընտրեց իր գերեզմանատեղին:

Այսօրվան օշականցին դարերեն բերներան իրեն հասնող որվագներ ունի, որոնցմեծ մեկն է հետևյալը. «Թարերու ընթացքին Հայաստանը ասպատակող եկեղեցի և ավերող թշնամիներ, լսելով քաջն Վահան Ամատոռնի հետ թաղված իշխանական ուկյա և ականակութ թանկարժեք և այլ իշխանական թանկարժին իրերու մասին, շատ անգամ փորձեր են գերեզմանը կողոպտել,

բայց ամեն անգամ ձախողանքներու տակ շանթահարվեր են»;

Հայոց աշխարհի հազարապետ քաջն Վահան Ամատունիի գերեզմանը իր դամբարանով կատնվի եկեղեցիի շրջափակին մեջ, Մեսրոպ Մաշտոցի գերեզմանեն հաղիվ 140—150 քայլ հեռավորության վրա:

Կեսօր էր, երբ մատուռն դուրս ելանք: Ժողովուրդը ուրախության մեջ էր: Եկեղեցիի շրջափակին և մոտակա այգիներուն մեջ լինչեին խրախճանքի երգեր: Ժողովրդական երգն ու պարը, դոյլն ու զուռնան կարձագանքեին ամեն կողմ: Օշականի Ս. Գեորգ եկեղեցիի տոնախմբությունը ժողովրդական խրախճանքի փոխփած էր, խանդավաված էին մեծն ու փոքրը: Եկեղեցիի շրջափակին մեջ պատրաստված մատաղները անխտիր կրածնեին բոլորին: Մեր խոմբը Հյուրասիրվեցալ օշականցի երկսեռ երիտասարդներու խոմբի մը, որոնք մեզ կճանչնային:

Հյուրասեր օշականցիի ալդ խնջուզի սեղանը, նահապետական բազմանդամ ընտանիքի մը ներկայությունը, իր շերմ ու անկեղծ հյուրասիրությունը, ժողովրդական երգ ու պարով համեմված և իրար հաջորդող կենաց բաժակներով մեզի մոտեն ծանոթացուցին օշականցիի ավանդական բարեկամ ընտանիքի մը անգամ գյուղի պատմական Ս. մատուռը, որուն լուսաշող, աշտարակաձև զանգակատան կամարին տակ առհավետ հանգլեին համայն հայության պաշտելի Ս. Մեսրոպ Մաշտոցի նշխարները:

75-ամյա Դալարին հետ, զարմանալի աշխուժությամբ Օշականի «զույգ պարոը պարեցին դեմ-դիմաց: Այդ ժողովրդական հայկական պարին շարումնակությունը եղավ Օշականի հնօրյա ձևով «վեր-վեր» կլոր պարը, որուն մասնակցեցան սեղանակիցները:

Խնջուզի սեղանի վրա, որը շատ երկար տես Օշականի հնօրյա սովորության համաձայն, հյուրերուս կենացը քանից անգամ բաժակներ պարպվեցան, Հրաժեշտի պահուած մեզ «զնաք բարով» մաղթելով, տան մեծերը մեզ օրհնեցին ըսելով. «Ս. Մեսրոպ Մաշտոցի օրհնյալ լուսը առհավետ ձեզ առջնորդե...»:

Մեր վերադարձին լուսնակ երեկո էր: Մեր մեքենան կանցներ Օշական գյուղի լուսավոր, մաքուր փողոցներեն, որոնց երկու կողմերը գտնվող պարտեզամեջ տոներու շեմբերեն մինչև անոնց կտուրներուն վրա, գեղ կշարունակվեին օրվա խրախճանքները: Դյուզի վերավորության, սարահարթի մը վրայեն, մենք անգամ մը ևս դիտեցինք Օշական գյուղի պատմական Ս. մատուռը, որուն լուսաշող, աշտարակաձև զանգակատան կամարին տակ առհավետ հանգլեին համայն հայության պաշտելի Ս. Մեսրոպ Մաշտոցի նշխարները:

Այդ ուստի օրը իմ և ընկերներուս կյանքի ամենաերջանիկ օրերեն մեկն էր: Մենք հասեր էինք մեր մուրազին. Հայրենի հարազատ հողի վրա համբուրեր էինք Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը, և «քարի մը պաղ երակներեն ծծեր էինք հոգեկան կայծեր՝ երկար դարերով իրենց կրակը անշեղ պահող նվիրական նշխարներեն»,

